19.07.2021թ. կնքված **ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-55-01** պայմանագրի
շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

## համաձայնագիր № 1

ք. Երևան 17 օգոստոսի 2021թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հարությունյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը և № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-55-01» պայմանագրի 7.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### Համաձայնագրի առարկան

1. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը, հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2021թ. հուլիսի 19-ին կնքված № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-55-01» պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԾՁԲ-ՀՎԿԱԿ-2021-55-01» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ Երևան, Բաղրամյան, 51 ա |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի «Արաբկիր» մ/ճ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 163058361243 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 00014553 |
| Գլխավոր տնօրեն՝ Ա.Վանյան | Տնօրեն՝ Ա.Հարությունյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |